



Գործնական խորհուրդներ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ, ՈՎՔԵՐ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ԵՆ ԽՈՍՔԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ

Խոսքի կամ հաղորդակցման խանգարումներ ունեցող երեխաները, ինչպես և բոլորը, ԿԱՐՈՂ ԵՆ ՍՈՎՈՐԵԼ, իսկ դասավանդել նրանց նշանակում է **օգնել նրանց հասնել իրենց ամենամեծ ներուժին:**

Շնորհակալություն Ձեզ այս մեծ մարտահրավերն ընդունելու պատրաստակամության համար:



1 ԴԱՍԱՐԱՆ

Դպրոցում սովորողները պետք է լսեն, բանավոր և գրավոր արտահայտեն իրենց կարծիքը, հաղորդակցվեն իրենց դասընկերների և մանկավարժների հետ: Հաղորդակցումը անհրաժեշտություն է դասարանում: Պատկերացրեք, թե ինչ խոչընդոտների և դժվարությունների է հանդիպում սովորողը, որը չի կարողանում իրականացնել վերը նշվածներից որևէ մեկը:

Դասարանում ստեղծեք դրական մթնոլորտ: Սովորողի մոտ ձևավորեք դասարանական գործողություններին և քննարկումներին մասնակցելու դրական մոտիվացիա: Ստեղծեք ընդունող և հասկացող մթնոլորտ: Համոզված եղեք, որ սովորողը տվյալ պահին ցանկանում է արտահայտել իր մտքերը կամ հարգեք լռելու իրավունքը, եթե երեխան չի ցանկանում պատասխանել: Հենվեք սովորողի ուժեղ կողմերի վրա:

2 ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Սովորողը պետք է իմանա, որ իր խոսքային կամ լեզվական դժվարությունը, օրինակ՝ կակազելը, Ձեզ համար խնդիր չէ, և Դուք ընդունում եք նրան ինչպես ցանկացած այլ սովորողի: Երեխային դիմեք անունով և համոզված եղեք, որ գտնվում եք նրա ուշադրության կենտրոնում: Վստահ եղեք, որ սովորողը դասարանում իրեն արժևորված է զգում:

Երկխոսության մեջ առաջատար դեր և բավարար ժամանակ հատկացրեք սովորողին, որպեսզի նա կարողանա արձագանքել Ձեր հրահանգներին: Ցույց տվեք, որ ուշադիր լսում եք նրան: Եղեք համբերատար, երբ սովորողը խոսում է, քանի որ շտապելը կարող է հանգեցնել հիասթափության:

3 ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

Դասապրոցեսի ընթացքում կիրառեք համագործակցային մոտեցումներ: Երբեմն կարելի է դասարանը բաժանել փոքր խմբերի կամ զույգերի, որպեսզի երեխաները կարողանան միմյանց աջակցել: Ստեղծեք այնպիսի իրավիճակ, որ սովորողը «ստիպված կլինի» օգնություն խնդրել, հարցեր տալ, խոսել: Նոր նյութի հաղորդման և գործնական աշխատանքների ժամանակ հաշվի առեք սովորողի հաղորդակցման և շփման նախասիրությունները:

4 ՈՍԿԵ ԿԱՆՈՆՆԵՐ

Նոր գաղափարների կամ երևույթների մասին խոսելիս օգտագործեք սովորողին ծանոթ բառապաշար և նախադասությունների կառուցվածք: Խոսեք ոչ շատ արագ, պարզ, հստակ, հասկանալի և ընդգծված արտասանությամբ: Հաճախ կարելի է կրկնել առաջադրանքը՝ ուղեկցելով այն ժեստերով և դիմախաղով: Սովորողի համար եղեք ճիշտ խոսքի մոդել:

Խուսափեք սովորողին ավելորդ բառերով կամ տեղեկատվությամբ ծանրաբեռնելուց, ինչպես նաև խոսքի մեջ բացասական և վերացական գաղափարներ օգտագործելուց: Հրահանգները բաժանեք առանձին մասերի, խոսքն ուղեկցեք ժեստերով, նշաններով և դիմախաղով, իսկ նոր նյութը մատուցեք հնարավորինս տեսանելի, տակտիլ և լսելի (նկարներ, գծապատկերներ, ծայնագրություններ, տեսանյութեր, դիագրամներ և այլն):

Քննությունների ժամանակ թեստային առաջադրանքները նրա համար կարդացեք բարձրաձայն, իսկ անհրաժեշտության դեպքում ապահովեք հանգիստ սենյակ:

5 ԱՆՀՐԱԺԵՇ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

Համոզվեք, որ ուսանողն ունի իր ցանկություններն ու կարիքները պատշաճ կերպով արտահայտելու միջոց: Դասասենյակը հարստացրեք դպրոցական ծրագրային նյութերի տեսաձայնարանով, նկարներով, տակտիլ նյութերով, պաստառներով և զանազան այլ դիդակտիկայով: Իսկ այլընտրանքային լրացուցիչ հաղորդակցման միջոցների (ԱԼՀ) կիրառումը կարող է նպաստել ոչ միայն սովորողի բանավոր խոսքի ձևավորմանն ու զարգացմանը, այլև, որպես հաղորդակցման միակ հնարավոր տարբերակ՝ ուղղորդել սովորողին որջ կյանքի ընթացքում:

6 ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Սա աշխատանք է միայն նվիրյալների համար: Մենք շնորհակալություն ենք հայտնում Ձեզ՝ Ձեր աջակցության և լրացուցիչ աշխատանքի համար: